International Labour Organization

ԱՄԿ ուղեցույցի տեղեկագիր

Ավելի շատ և ավելի լավ աշխատատեղերի ստեղծում

Կայուն ձեռնարկություններն արդար անցման համար ներառումն Ազգային մակարդակում սահմանված գործողություններում

Illustration generated with Adobe Firefly

Հիմնական ուղերձներ

Ազգային մակարդակում սահմանված գործողություններն (ԱՍԳ) երկրների կողմից ստանձնած պարտավորություններ են՝ կլիմայի փոփոխությանն անդրադառնալու և Փարիզյան համաձայնագրի նպատակներին հասնելու համար: ԱՍԳ-ն կարող է ծառայել և իբրև ազգային ներդրումային ծրագիր, և իբրև ազգային զարգացման ծրագիր՝ հաճախ թողնելով հետևանքներ ամբողջ տնտեսության վրա: Արդար անցման սկզբունքների ինտեգրումը ԱՍԳ-ում կլիմայական հավակնության իրականացման հիմնական խթանիչն է ու կայուն զարգացման շարժիչը:

Կայուն ձեռնարկությունների զարգացումը անհրաժեշտ է երկրների համար իրենց ԱՍԳ-ին հասնելու, արդար անցումը խթանելու և արժանապատիվ աշխատանքի հնարավորությունները մեծացնելու համար: Տարբեր տեսակի և չափի կայուն ձեռնարկությունները հանդես են գալիս որպես տնտեսական աճի և նորարարության շարժիչ ուժեր, առաջքային են ավելի շատ և ավելի լավ աշխատատեղեր ստեղծելու համար և հիմնարար դեր ունեն դեպի կայուն և ներառական տնտեսությունների անցումը առաջ մղելու համար:

Այս տեղեկագիրը տրամադրում է ուղեցույց ԱՍԳ-ում արդար անցման համար կայուն ձեռնարկությունների ինտեգրման վերաբերյալ: Այն նախատեսված է կայուն ձեռնարկությունները խթանող մասնագետների, ինչպես նաև իրենց երկրների ԱՍԳ-ում ներգրավված կառավարությունների, աշխատողների ու գործատուների կազմակերպությունների ներկայացուցիչների համար:

Արդար անցումը խթանում է շրջակա միջավայրի առումով կայուն տնտեսությունների զարգացումը, որը ներառական է և ստեղծում է արժանապատիվ աշխատանքի հնարավորություն, նվազեցնելով անհավասարությունը՝ չանտեսելով ոչ ոքի: Այն ներառում է հանուն կլիմայի և բնապահպանական գործողություններից բխող սոցիալական ու տնտեսական հնարավորությունների առավելագույն օգտագործումն, այդ թվում՝ կայուն ձեռնարկությունների համար նպաստավոր միջավայրի ձևավորումը՝ միաժամանակ նվազեցնելով և զգուշորեն կառավարելով առկա մարտահրավերները:

Որո՞նք են ձեռնարկությունների և այնտեղ աշխատողների համար կլիմայի փոփոխության հիմնական **սպառնալիքները** և դրան առնչվող միջոցառումները:

Պատկերազարդումն իրականացվել է Adobe Firefly օգնությամբ:

Հիմնական սպառնալիքները

Կլիմայի ազդեցությունը սպառնում է բնությունից կախվածություն ունեցող բիզնեսներին.

Նման ազդեցությունները ռիսկեր են ստեղծում տարբեր ոլորտներում բազմաթիվ ձեռնարկությունների համար, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կախում ունեն բնությունից՝ ապրանք ստեղծելու և ծառայություններ մատուցելու համար:

Ծայրահեղ եղանակային երևույթները զգալի սոցիալական և տնտեսական ծախսերի հետ են կապված.

Դրանք կարող են վնաս պատճառել բիզնեսի ունեցվածքին, խաթարել նրա գործունեությունը և մատակարարման շղթաները, հանգեցնել աշխատատեղերի կորուստի, նվազեցնել արտադրողականությունը և վտանգել աշխատողների և գործատուների առողջությունն ու անվտանգությունը:

Անհավասար անցումը որոշակի մարտահրավերներ է առաջացնում.

Դրանք կարող են տատանվել ֆինանսավորման պակասից և ձեռնարկությունների համար համապատասխանության պահանջների փոփոխությունից մինչև աշխատողների համար սոցիալական պաշտպանության բացերը: Մարտահրավերները կարող են սրվել, եթե բացակայում է սոցիալական երկխոսությունը և եթե ոչ ֆորմալ տնտեսությունը հաշվի չի առնված կլիմայական քաղաքականություններում:

Էներգետիկ անապահովության ռիսկ.

Մատչելի, հուսալի և կայուն էլեկտրաէներգիայի սահմանափակ հասանելիությունը, որը պակասում է կլիմայական ցնցումների և անցումային բարձր ծախսերի պատճառով, ստեղծում է ֆինանսական և գործառնական ռիսկեր բոլոր տեսակի և չափի ձեռնարկությունների համար:

Ձեռնարկատիրական սպեկտրի բազմազան սպառնալիքներ.

Ձեռնարկատիրական սպեկտրի տարբեր ոլորտներում միկրո, փոքր և միջին ձեռնարկությունները (ՄՓՄՁ), ոչ ֆորմալ տնտեսության տնտեսական միավորները, կոոպերատիվները և այլ սոցիալական և համերաշխության տնտեսության (ՍՀՏ) միավորները, ինչպես նաև խոշոր ձեռնարկությունները բախվում են կլիմայի փոփոխության և դրան առնչվող քաղաքականությունների բազմազան ռիսկերի:

Ինչպիսի՞ հնարավորություններ կարող են քաղել երկրները՝ իրենց ԱՍԳ-ում արդար անցման համար կայուն ձեռնարկությունների վրա կենտրոնանալով:

Պատկերազարդումն իրականացվել է Adobe Firefly օգնությամբ:

Հնարավորություններ

Տնտեսական աճի ապահովում՝ սոցիալական, բնապահպանական և զբաղվածության ոլորտի ձեռքբերումներ

կայուն ձեռնարկությունների միջոցով, երբ գործող ոլորտները վերափոխվում են, իսկ ցածր արտանետումներով ոլորտները՝ զարգանում:

Տնտեսական դիվերսիֆիկացում՝ նոր բիզնես հնարավորություններով

միաժամանակ բարձրացնելով արտադրողականությունը, նորարարությունը և մրցունակությունը:

Կանաչ և դիմակայուն բիզնեսների միջոցով կլիմայի մեղմման և հարմարվողականության նպատակների իրականացում՝

երբ տարբեր տեսակի և չափի կայուն ձեռնարկությունները նվազեցնում են ածխաթթու գազի արտանետումները, հարմարվում կլիմայական ռիսկերին, զարգանում նոր շուկաներում, պաշտպանում աշխատողներին և ստեղծում արժանապատիվ աշխատատեղեր:

Նորարարության և տեխնոլոգիական փոխանցման խթանում,

քանի որ կայուն ձեռնարկություններն ընդունում և տեղայնացնում են էկոլոգիապես բարենպաստ տեխնոլոգիաներ, բարձրացնում արդյունավետությունը, կրճատում ծախսերը, ընդլայնում շուկայի հասանելիությունն ու մշակում նորարարական բիզնես մոդելներ:

Մատակարարման և արժեքի շղթաների ամրապնդում՝

բիզնեսների դիմակայունության զարգացմամբ, արտանետումների նվազեցմամբ, պատասխանատու բիզնես գործելակերպի պահպանմամբ և արտադրության բոլոր մակարդակներում արժանապատիվ աշխատանքին աջակցելով:

Չանտեսելով ոչ մի բիզնես և աշխատող՝

քանի որ կայուն ձեռնարկությունների զարգացման միջոցով արդար անցումը հզորացնում է սոցիալ-տնտեսապես խոցելի խմբերին, խթանում է ներառականությունը ցածր ածխածնային դիմակայուն տնտեսությունում և աջակցում է ոչ ֆորմալ տնտեսության ֆորմալացմանը:

Արդար անցման համար ֆինանսական ներդրումների խթանում՝

հանրային և մասնավոր աղբյուրներից ու ֆինանսական հաստատություններից՝ անցման բնապահպանական և սոցիալական հիմքերին աջակցելու և կայուն ձեռնարկություններին՝ սկսած ՄՓՄԶ-ից և կոոպերատիվներից մինչև խոշոր ընկերություններ, հնարավորություն տալու նվազեցնել արտանետումները, բարձրացնել դիմակայունությունը, ձեռնարկել ձեռնարկությունների մակարդակի անցումային գործընթացները և ստեղծել արժանապատիվ աշխատատեղեր:

Ի՞նչ է անհրաժեշտ հաշվի առնել կայուն ձեռնարկությունները ԱՍԳ-ում ինտեգրելիս:

- **ԱՍԳ-ի մշակման փուլում արդյունավետ սոցիալական երկխոսության ապահովում.** որը հիմնարար նշանակություն ունի իրական տնտեսության դերակատարների՝ մասնավորապես՝ աշխատողների և գործատուների կազմակերպությունների տեսակետներն ու մտահոգությունները հասկանալու համար:

- **ԱՍԳ-ում արդար անցման ամուր հիմքով ամրակայում.** կլիմայական նպատակների և արդար անցման միջև ամուր կապերի հաստատումը Էական կլինի հանուն կլիմայի գործողության սոցիալական և զբաղվածության բաղադրիչները հասցեագրելու համար:

- **Զանազան կայուն ձեռնարկությունների դիտարկումը իբրև գործողություն հանուն կլիմայի և արժանապատիվ աշխատանքի շարժիչ ուժեր.** բացահայտ կերպով ընդգծելով տարբեր տեսակի և չափի կայուն ձեռնարկությունների, այդ թվում՝ ՄՓՄՁ-ների և կոոպերատիվների ու այլ ՍՀՏ միավորների դերը բնապահպանական, սոցիալական և զբաղվածության ոլորտներում ձեռքբերումներ ապահովելու գործում:

- **Կայուն ձեռնարկությունների համար նպաստավոր միջավայրի ներդրում.** ԱՍԳ-ում հստակորեն ներառելով նպաստավոր միջավայր, որը կարող է ապահովել քաղաքականության որոշակիություն և ձեռնարկությունների զարգացման նկատմամբ հստակ հանձնառություն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են բիզնեսի զարգացման ծառայությունների մատուցումը, խթանիչների կամ սուբսիդիաների առաջարկը, կարգավորող կամ քաղաքականության բարեփոխումների իրականացումը և այլն:

- **Մատակարարման և արժեքի շղթաների զարգացման և ամրապնդման վրա կենտրոնացում.** ԱՍԳ-ում ուրվագծել նոր ապրանքների կամ հումքով պայմանավորված մատակարարման և արժեքի շղթաներ կառուցելու և եղածների դիմակայունությունը բարձրացնելու ուղիները:

- **Պատասխանատու գործարար վարքագծի խթանում.** ձեռնարկությունների կլիմայական և բնապահպանական գործողություններում արժանապատիվ և արտադրողական աշխատանքի նկատառումների ներդրումը և համապարփակ գնահատման միջոցառումները: ԱՄԿ-ի՝ բազմազգ ձեռնարկություններին և սոցիալական քաղաքականությանն առնչվող սկզբունքների եռակողմ հռչակագիրը (ԲԱԶ Հռչակագիր), Մարդու իրավունքների վրա բիզնեսի ազդեցության մասին ՄԱԿ-ի առաջնորդող սկզբունքները և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Պատասխանատու բիզնես վարքագծի վերաբերյալ բազմազգ ձեռնարկությունների համար ուղեցույցը ներկայացնում են ձեռնարկությունների համար համապատասխան ուղեցույցներ արդար անցման համատեքստում:

- **ԱՍԳ-ում կայուն ձեռնարկությունների զարգացման և արդար անցման նպատակների ֆինանսավորման ինտեգրում.** հստակ կապերի ստեղծում կլիմայական և արդար անցման նպատակները ֆինանսավորման ռազմավարությունների հետ, որը մոբիլիզացնում է հանրային և մասնավոր ֆինանսական միջոցները և հեշտացնում կապիտալի հասանելիությունը բոլոր տեսակի և չափի ձեռնարկությունների համար:

- **Ածխածնի շուկաների օգտագործում կայուն ձեռնարկությունների և արժանապատիվ աշխատանքի համար.** ներառելով ԱՍԳ-ում պարտավորություններ, որոնք կաջակցեն բոլոր տեսակի և չափի ձեռնարկությունների մասնակցությանն ածխածնի շուկաներին՝ արդար անցում իրականացնելու համար:

- **Պարտավորվելով իրականացնել ԱՍԳ-ն աշխատանքի աշխարհի դերակատարների մասնակցությամբ.** ապահովելով ամբողջական կառավարություն և ամբողջական հասարակություն մոտեցումը, որն ընդգրկում է աշխատողների և գործատուների կազմակերպություններին, համապատասխան նախարարություններին, ֆինանսական հաստատություններին և ձեռնարկությունների աջակցության գործակալությունները՝ բոլորի համար արդար անցումն ապահովելու համար:

1. Ի՞նչ են ազգային մակարդակում սահմանված գործողությունները:

Ազգային մակարդակում սահմանված գործողությունները (ԱՍԳ) կլիմայական պարտավորություններ կամ կլիմայական ծրագրեր են, որոնք երկրները իրենց կողմից սահմանում են Փարիզյան համաձայնագրի շրջանակում:[1] Դրանք ուրվագծում են յուրաքանչյուր երկրի հանձնառություններն ու գործողությունների պլաններն՝ ուղղված արտանետումների կրճատմանը գլոբալ նպատակին հասնելու համար՝ ջերմաստիճանի բարձրացումը 1.5°C-ով սահմանափակելու, ինչպես նաև կլիմայական ազդեցություններին հարմարվելու համար, միաժամանակ սահմանելով այդ ջանքերի համար համարժեք ֆինանսական աջակցություն ապահովելու ուղիները: ԱՍԳ-ն պետք է վերանայվի յուրաքանչյուր հինգ տարին մեկ՝ աստիճանաբար ավելի բարձր հավակնություններով, արտացոլելով յուրաքանչյուր երկրի կարողությունները: Գործողությունները քաղաքական աջակցություն ունեցող ծրագրեր են, որոնք հաճախ հաստատվում են կառավարության ամենաբարձր մակարդակներում:[2]

ԱՍԳ-ն համատեղ որոշում է, թե արդյոք աշխարհը կարող է հասնել Փարիզյան համաձայնագրի երկարաժամկետ նպատակներին, այն է՝ ջերմոցային գազերի (ՋԳ) համաշխարհային ընդհանուր արտանետումների գագաթնակետին՝ հնարավորինս շուտ, որին կհաջորդի դրանց արագ կրճատումը՝ հիմնված առկա լավագույն գիտական տվյալների վրա: ԱՍԳ-ն կարող է նաև ծառայել հարմարվողականության առաջնահերթությունները սահմանելու համար, որոնք ավելի ու ավելի մեծ մտահոգություն են առաջացնում, հատկապես զարգացող երկրների համար: 2015 թվականին Փարիզյան համաձայնագրի ընդունումից ի վեր երկրները զգալի առաջընթաց են գրանցել և կարևոր պարտավորություններ են ստանձնել: Այնուամենայնիվ, իրենց ԱՍԳ-ում երկրների կողմից ստանձնած պարտավորությունները բավարար չեն, քանի որ կանխատեսվում է աշխարհի ջերմաստիճանի բարձրացում 2.6-ից 3.1°C այս դարի ընթացքում:[3] Երկրները մշակում են ԱՍԳ-ի իրենց երրորդ փուլի տարբերակները (հաճախ անվանում են ԱՍԳ 3.0), որը պետք է իրականացվի 2025 թվականին և ներկայացնում է կարևոր հնարավորություն՝ հավակնությունները բարձրացնելու՝ կրճատելով արտանետումների ճեղքվածքը:

1.1. Ինչպե՞ս են ԱՍԳ-ում փոխկապակցվում կայուն զարգացումը և արդար անցումը:

Չնայած ԱՍԳ-ն կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության ազգային ծրագիր է, դա կարող է նաև ծառայել որպես «ազգային ներդրումային ծրագիր և ազգային զարգացման ծրագիր»:[4] Այն հաճախ ունի հետևանքներ ամբողջ տնտեսության վրա և հնարավորություն է տալիս իրականացնել կայուն զարգացման ուղղությամբ փոխակերպող տեղաշարժ, որը հստակորեն անդրադառնում է հանուն կլիմայի գործողության սոցիալական և զբաղվածության բաղադրիչներին: Բացի այդ, ԱՍԳ-ն կարող է խթանել տնտեսական աճը, նպաստել տնտեսական դիվերսիֆիկացմանը և ներդաշնակեցնել ֆինանսական հոսքերը՝ միաժամանակ բացահայտելով կայուն ձեռնարկությունների և արժանապատիվ աշխատանքի ներուժը՝ խթանելով ավելի շատ և ավելի լավ աշխատատեղերի ստեղծումը:

1 Ավելի շատ տեղեկությունների համար տե՛ս՝ Ազգային մակարդակում սահմանված գործողություններ (ԱՍԳ):
2 Ավելի շատ տեղեկությունների համար տե՛ս՝ Ի՞նչ է ԱՍԳ-ն և ինչպե՞ս է այն խթանում հանուն կլիմայի գործողությունը:
3 Շրջակա միջավայրի վերաբերյալ ՄԱԿ-ի ծրագիր, 2024թ.: Արտանետումների ծեղքվածքի մասին զեկույց 2024թ .:
4 Ավելի շատ տեղեկությունների համար տե՛ս՝ Ամեն ինչ ԱՍԳ-ի մասին:

Արդար անցման սկզբունքների ինտեգրումը ԱՍԳ-ում ծառայում է որպես կլիմայական հավակնության իրականացման հիմնական խթանիչ և կայուն զարգացման շարժիչ:[5]. Արդար անցումը խթանում է շրջակա միջավայրի տեսանկյունից կայուն տնտեսությունները ներառական ձևով՝ ստեղծելով արժանապատիվ աշխատանքի հնարավորություններ, նվազեցնելով անհավասարությունը և չանտեսելով ոչ ոքի: Այն ենթադրում է հանուն կլիմայի և բնապահպանական գործողության սոցիալական և տնտեսական հնարավորությունների առավելագույն օգտագործում, ներառյալ կայուն ձեռնարկությունների համար նպաստավոր միջավայրը, միաժամանակ նվազագույնի հասցնելով և զգուշորեն կառավարելով մարտահրավերները:[6] Բացի այդ, արդար անցումը նպաստում է քաղաքականության համաձայնեցվածությանը բոլոր մակարդակներում և տարբեր ոլորտներում՝ խթանելով բնապահպանական, սոցիալական և տնտեսական բաղադրիչների հանդեպ ինտեգրված մոտեցումը: Չափազանց կարևոր է, որ այն հիմնված է արդյունավետ սոցիալական երկխոսության վրա՝ տնտեսության իրական դերակատարների՝ աշխատողների և գործատուների ակտիվ մասնակցությամբ, ինչպես նաև շահագրգիռ կողմերի ներգրավմամբ, ինչը ապահովում է ԱՍԳ-ում ներգրավվածության համընդհանուր զգացումը:

ԱՄԿ-ի առանցքային դերը կլիմայի քաղաքականության ձևավորման մեջ

ԱՄԿ-ն առաջնորդում է ջանքերը ինտեգրելու կլիմայական քաղաքականության գործընթացներում կլիմայական և բնապահպանական փոփոխությունների սոցիալական և զբաղվածության բաղադրիչները՝ միջազգային, տարածաշրջանային և ազգային մակարդակներում:

ԱՍԳ-ն կարևոր մեկնարկային կետ է արդար անցումն առաջ մղելու համար կայուն ձեռնարկությունների խթանման և արժանապատիվ աշխատանքի ստեղծման նպատակով՝ հիմնվելով 2015 թվականի ԱՄԿ-ի Բոլորի համար էկոլոգիապես կայուն տնտեսությունների և հասարակությունների արդար անցման համար ուղեցույցների վրա: Այս առումով, ԱՄԿ ՈՒղեցույցները տրամադրում են համապարփակ շրջանակ, որը ներառում է քաղաքականություններ ինը հիմնական ոլորտներում՝ մակրոտնտեսական և աճի քաղաքականություններ, արդյունաբերական և ոլորտային քաղաքականություններ, ձեռնարկատիրական քաղաքականություններ, հմտությունների զարգացում, աշխատանքի անվտանգություն և առողջություն, սոցիալական պաշտպանություն, ակտիվ աշխատաշուկայի քաղաքականություններ, իրավունքներ, ինչպես նաև սոցիալական երկխոսություն և եռակողմ համագործակցություն: Աշխատանքի միջազգային համաժողովի 2023 թվականի Բանաձևը ԱՄԿ ուղեցույցները հաստատել է որպես քաղաքականության մշակման կենտրոնական ուղեցույց և արդար անցման գործողության հիմք: Այն նաև կոչ է անում ապահովել քաղաքականության համաձայնեցվածությունը բոլոր մակարդակներում և տարբեր ոլորտներում, ինչպես նաև ներդնել արդար անցման համար բավարար ֆինանսավորման դրույթներ:

ԱՍԳ-ում արդար անցման հարցերը հասցեագրելու նպատակով ԱՄԿ-ն պատրաստ է աջակցել երկրներին մշակել իրենց ազգային կլիմայական ծրագրերը, որոնք՝ ա) հիմնված են ազգային առաջնահերթությունների վրա, բ) անդրադառնում են կլիմայական փոփոխությունների և կլիմայական միջոցառումների սոցիալական և զբաղվածության ազդեցություններին, գ) առաջարկում են գործնական սկզբնակետեր, դ) հիմնված են սոցիալական երկխոսության և շահագրգիռ կողմերի ներգրավվածության վրա, և ե) ուշադրություն են դարձնում խոցելի խմբերի կարիքներին:

ԱՄԿ-ն համագործակցում է իր եռակողմ գործընկերների՝ 187 Անդամ պետությունները ներկայացնող կառավարությունների, գործատուների և աշխատողների կազմակերպությունների հետ՝ հանուն կլիմայի գործողությունում արժանապատիվ աշխատանքի և սոցիալական արդարության հարցերը արծարծելու համար:

Կանանց դեր

5 ԱՄԿ, 2024թ. ԱՍԳ-ի օգտագործումը որպես արդար անցման միջոց՝ հանուն կլիմայի գործողության հավակնոտ իրականացման գործում:

6 Աշխատանքի միջազգային համաժողով, 2023թ.: Բոլորի համար էկոլոգիապես կայուն տնտեսությունների և հասարակությունների արդար անցման վերաբերյալ բանաձև:

2. Ինչո՞ւ կայուն ձեռնարկությունները էական նշանակություն ունեն ԱՍԳ-ի հաջողության համար:

Կլիմայի հետ կապված սոցիալական, տնտեսական և բնապահպանական ազդեցությունների, ինչպես նաև քաղաքականության իրականացման խաչմերուկում գործում են արտադրության, գյուղատնտեսության, Էներգետիկայի, տրանսպորտի, հանքարդյունաբերության և այլ ոլորտների ձեռնարկություններ: Այս ձեռնարկությունները կարող են լինել մասնավոր կամ հանրային, տարբերվել չափերով և տեսակով՝ սկսած միկրո, փոքր և միջին ձեռնարկություններից (ՄՓՄՁ) և կոոպերատիվներից ու այլ սոցիալական և համերաշխության տնտեսության (ՍՀՏ) միավորներից մինչև խոշոր բազմազգ կորպորացիաներ: Ավելին, մինչդեռ տարբեր ձեռնարկություններ գործում են ֆորմալ տնտեսությունում, տնտեսական միավորների մեծ մասը, հատկապես զարգացող երկրներում, ոչ ֆորմալ են: Մեծ մասամբ, նման ոչ ֆորմալ ձեռնարկությունները որպես կանոն միկրոձեռնարկություններ (ներառյալ ինքնազբաղներին) և փոքր ձեռնարկություններ են:[7]

Չնայած բոլոր տեսակի և չափի ձեռնարկությունները կենսական դեր ունեն երկրների սոցիալական և տնտեսական դաշտում, դրանք՝

- բախվում են զգալի մարտահրավերների և խափանումների՝ պայմանավորված կլիմայական և բնապահպանական փոփոխություններով ու դրանց արձագանքող քաղաքականությունների միջոցառումներով, սակայն միևնույն ժամանակ
- արդար անցման առաջխաղացման, ցածր ածխածնային դիմակայուն տնտեսություններ կառուցելու, արժանապատիվ աշխատանք ստեղծելու և ավելի շատ ու ավելի լավ աշխատատեղերի ստեղծման շարժիչ ուժ հանդիսանալու հիմնարար դերակատարներն են:

ԱՍԳ-ի պատկերացման և նախագծման եղանակը լուրջ հետևանքներ ունի ձեռնարկությունների համար, քանի որ այս կլիմայական ծրագրերը հաճախ ընդգրկում են բազմաթիվ ոլորտներ և ծավալվում են *ամբողջ տնտեսության* վրա: Սա հատկապես արդիական է, քանի որ ձեռնարկությունները խթանում են տեխնոլոգիական և կազմակերպչական փոփոխությունները, ինչպես նաև մշակում են նորարարական լուծումներ և ապրանքներ, որոնք անհրաժեշտ են կլիմայական, սոցիալական և տնտեսական նպատակներին հասնելու համար: Միևնույն ժամանակ ձեռնարկությունները շարունակում են բախվել լուրջ մարտահրավերների, ինչպիսիք են նախնական ներդրումների բարձր ծախսերը, սահմանափակ ֆինանսավորումը, հմտությունների պակասը, մատչելի տեխնոլոգիաների հասանելիության բացակայությունը և այլն: Որպես քաղաքականության հիմնական գործիք, ԱՍԳ-ն կարող է աջակցել կայուն ձեռնարկությունների զարգացմանը, հատկապես, եթե նախատեսված ներդրումները ներառում են բարենպաստ բիզնես միջավայր խթանելու դրույթներ՝ նպաստելով արդար անցմանը բոլորի համար և ապահովելով, որ հանուն կլիմայի գործողությունները *կենսունակ են բիզնեսների համար և մարդակենտրոն* են:

7 ԱՄԿ, 2021: Ձեռնարկությունների ֆորմալացում. Ներածություն: Թեմատիկ համառոտագիր 1/2021:

2.1. Ի՞նչ հիմնական սպառնալիքներ են առկա ձեռնարկությունների և նրանց աշխատողների առջև կլիմայի փոփոխության և դրա հետ կապված միջոցառումների պատճառով:

Կլիմայի ազդեցությունը մի շարք սպառնալիքներ է ներկայացնում բոլոր տեսակի և չափի ձեռնարկությունների, ինչպես նաև այնտեղ աշխատողների համար: Բացի այդ, որոշ կլիմայական միջոցառումներ կարող են մարտահրավերներ առաջացնել, որոնք կարող են բացասաբար ազդել բիզնեսների վրա: Այս սպառնալիքները կարող են խաթարել արտադրողականությունն ու մրցունակությունը, սահմանափակել ձեռնարկությունների աճելու և արժանապատիվ աշխատատեղեր ստեղծելու կարողությունը և, ի վերջո, ազդել ամբողջ տնտեսության վրա:

Կլիմայի ազդեցությունը սպառնում է բնությունից կախում ունեցող ձեռնարկություններին

Շատ ձեռնարկություններ ապավինում են կայուն և առողջ միջավայրին՝ ապրանքներ և ծառայություններ արտադրելու և մատուցելու համար, և ունեն ուղղակի կախվածություն բնությունից գյուղատնտեսության, հանքարդյունաբերության կամ էկոտուրիզմի նման ոլորտներում և անուղղակի կախվածություն՝ սննդի և ըմպելիքների արտադրությունում, հագուստի արդյունաբերությունում կամ շինարարությունում: Էկոհամակարգի ծառայություններն, օրինակ՝ բերքի փոշոտումը կամ օդի մաքրումը, նույնպես ազդում են ներդրման քանակի և որակի վրա:[8] Քանի որ կլիմայի վրա ազդեցությունները ուժեղանում են, և ռեսուրսների սղությունն աճում է, բոլոր տեսակի և չափի ձեռնարկությունները բախվում են աճող ռիսկերի հետ:

Ծայրահեղ եղանակային երևույթները զգալի սոցիալական և տնտեսական ծախսերի հետ են կապված

Ծայրահեղ եղանակային երևույթների, ինչպիսիք են երաշտները, ջրհեղեղները, տապի ալիքները և անտառային հրդեհները, նրանց հաճախականությունն ու ծանրությունն անմիջականորեն ազդում են ձեռնարկությունների, աշխատողների և ամբողջ տնտեսության վրա: Այս ազդեցությունները հատկապես լուրջ են զարգացող երկրներում, սակայն չեն շրջանցում նաև զարգացած երկրներին:[9] Գնահատականները ցույց են տալիս, որ 2014-2023 թվականների միջև ընկած ժամանակահատվածում կլիմայի հետ կապված ծայրահեղ եղանակային երևույթները համաշխարհային տնտեսությանը հասցրել են ավելի քան 2 տրիլիոն ԱՄՆ դոլարի վնաս և ազդել մոտ 1.6 միլիարդ մարդու վրա:[10] Բացի այդ, ԱՄԿ տվյալներով՝ ամբողջ աշխարհում 2.41 միլիարդ աշխատող ենթարկվում է խորշակահարման, ինչը տարեկան հանգեցնում է մոտ 22.85 միլիոն ոչ մահացու վնասվածքների և 18,970 մահվան:[11] Ծայրահեղ եղանակային երևույթները կարող են վնաս պատճառել բիզնեսի ունեցվածքին, խաթարել գործունեությունը և մատակարարման շղթաները, հանգեցնել աշխատատեղերի կորուստի, նվազեցնել արտադրողականությունը և վտանգել աշխատողների և գործատուների առողջությունն ու անվտանգությունը:

Անհավասար անցումը հատուկ մարտահրավերներ է առաջացնում

Կլիմայական կամ բնապահպանական քաղաքականություններն ու կարգավորումները կարող են լուրջ մարտահրավերներ առաջացնել բոլոր տեսակի և չափի ձեռնարկությունների, ինչպես նաև այնտեղ աշխատողների համար: Այս միջոցառումները կարող են խթանել ոլորտային և մատակարարման շղթայի փոխակերպումները՝ պահանջելով ձեռնարկություններից զգալի

8 ԱՄԿ, 2022: Կանաչ դարձնելով ձեռնարկությունները. գործընթացների և աշխատավայրերի փոխակերպում:

9 Ադիլ, Լ. և այլք, 2025թ.: Կլիմայական ռիսկի ինդեքս 2025թ: Գերմանվոթչ:

10 Օքսերա: 2024: Ծայրահեղ եղանակային երևույթների տնտեսական արժեքը: Պատրաստվել է Միջազգային առևտրի պալատի համար:

11 ԱՄԿ, 2024թ. Ջերմություն աշխատավայրում. հետևանքները անվտանգության և առողջության համար:

ներդրումներ ածխածնազերծման կամ հարմարվողականության գործընթացների մեջ, չնայած ֆինանսավորման մշտական բացերի առկայությանը: Ձեռնարկությունները կարող են նաև բախվել որակավորված աշխատուժի պակասի, մինչդեռ աշխատողները՝ վերապատրաստման և սոցիալական պաշտպանության բացերի, այդ թվում՝ աշխատատեղերի կորստի: Բացի այդ, քանի որ կարգավորող շրջանակները արագ են փոփոխվում, բազմաթիվ ձեռնարկություններ կարող են դժվարությամբ համընթաց քայլել և կողմնորոշվել համապատասխանության փոփոխվող պահանջների պայմաններում:[12]

Ավելի լայն առումով, կլիմայական և բնապահպանական քաղաքականության մշակման գործընթացում սոցիալական երկխոսության բացակայությունը կարող է անտեսել իրական տնտեսության դերակատարների՝ ինչպիսիք են աշխատողներն ու գործատուների կազմակերպությունները, մտահոգությունները, այդպիսով խաթարելով նման միջոցառումների նկատմամբ պատասխանատվությունը: Մասնավորապես, ոչ ֆորմալ տնտեսության դեպքում՝ երբ աշխատողներն ու ձեռնարկությունները հաճախ դուրս են մնում երկխոսության գործընթացներից, նրանց առանձնահատուկ սահմանափակումները կարող են քաղաքականության ձևավորման ընթացքում չհաշվարկվել:

Էներգետիկ անվտագության ռիսկը

Մասնավորապես շատ զարգացող երկրներում հուսալի և մատչելի էներգիայի սահմանափակ հասանելիությունը դեռևս ձեռնարկությունների գործունեության և աճի հիմնական խոչընդոտն է:[13] Այս մարտահրավերը կարող է սրվել ծայրահեղ եղանակային երևույթների հետևանքով, որոնք վնասում են էներգետիկ ենթակառուցվածքները: Միևնույն ժամանակ, էներգետիկ ոլորտի ածխածնազերծման ջանքերը թափ են հավաքում՝ ստեղծելով բիզնեսի և զբաղվածության զգալի հնարավորություններ: Այնուամենայնիվ, հատկապես մի շարք զարգացող երկրներում, քաղաքականության բացերը շարունակում են պահպանվել, իսկ կայուն էլեկտրաէներգիայի անցման համար անհրաժեշտ բարձր կապիտալ ծախսերը շարունակում են խոչընդոտել առաջընթացը[14]՝ ստեղծելով դժվարություններ այն ձեռնարկությունների համար, որոնք ձգտում են ապահովել մաքուր, մատչելի և հուսալի էներգիայի հասանելիություն:

Բազմազան սպառնալիքներ ձեռնարկությունների տարբեր խմբերի համար

Տարբեր տեսակի ձեռնարկություններ կարող են բախվել կլիմայի փոփոխությունից և դրան առնչվող քաղաքականությունից առաջացած տարբեր ռիսկերի:

ՄՓՄՁ-ն երկրների մեծ մասում զբաղվածության հիմնական աղբյուրն է:[15] Կլիմայական ազդեցությունները կարող են նվազեցնել ՄՓՄՁ-ի արտադրողականությունը և ակտիվների արժեքը՝ խաթարելով գործունեությունը և ֆինանսական արդյունավետությունը:[16] Բացի այդ, կլիմայական քաղաքականությունները, կարգավորող պահանջները և խոշոր ընկերությունների չափանիշներին համապատասխանելու համար արժեքի շղթայի ճնշումները կարող են փորձել ՄՓՄՁ-ը մղել դեպի ածխածնազերծման և հարմարվողականության ուղիներ: Այնուամենայնիվ դրանց հետ կապված ծախսերը շարունակում են մնալ լուրջ խոչընդոտ, և շատ ձեռնարկություններ կարող են չունենալ անհրաժեշտ ռեսուրսներ, տեխնիկական գիտելիք, վարկերի, ապահովագրության կամ ներդրումների հասանելիություն, ինչպես նաև նորարարությունների կամ հարմարվողականության կարողություն: Սահմանափակումների պայմաններում նրանք կարող են կանգնել բարդ ընտրության առջև՝ անմիջական կլիմայական ռիսկերը կառավարելու և երկարաժամկետ ներդրումային նախաձեռնություններն իրականացնելու գործընթացների միջև:[17]

12 Օրինակ՝ տե՛ս՝ ԱՄԿ, 2022. Ինչպես կարող է ՄՓՄՁ-ն նպաստել արդար անցմանն և օգտվել դրանից:

13 Օրինակ, տե՛ս՝ ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողով, 2017: Փոպակերպվող էներգիայի հասանելիություն: Քաղաքականության համառոտագիր թիվ 55:

14 Համաշխարհային բանկ, 2024: Կարևորագույն կապ. էլեկտրական ծառայությունների հզորացումն էներգետիկ անցման համար:

15 ԱՄԿ, 2019: Փոքրը նշանակություն ունի. ինքնագբաղների, միկրոձեռնարկությունների և ՓՄՁ-ի կողմից զբաղվածության մեջ ներդրման վերաբերյալ գլոբալ ապացույցներ:

16 Համաշխարհային բանկ, 2022թ.: Փոքր և միջին ձեռնարկությունների համար պետական վարկային երաշխիքների սխեմաներում կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության ինտեգրման ուղեցույցներ:

17 ԱՄԿ, 2022: Ինչպես կարող է ՄՓՄՁ-ն նպաստել արդար անցմանն և օգտվել դրանից:

Ոչ ֆորմալ տնտեսության տնտեսական միավորները հատկապես զարգացող երկրներում, հաճախ բնորոշվում են արժանապատիվ աշխատանքի բացերով: Կլիմայի փոփոխությունը կարող է խորացնել այդ բացերը, քանի որ ոչ ֆորմալ ձեռնարկություններն ու այնտեղ աշխատողները չափազանց սահմանափակ կարողություններ ունեն դրա հետևանքներին դիմակայելու համար: Թե՛ քաղաքային, թե՛ գյուղական վայրերում կլիմայական ցնցումները կարող են լրջորեն խաթարել ոչ ֆորմալ տնտեսությանում առկա կենսապահովան միջոցները և խորացնել աղքատությունը:[18] Քանի որ վերականգնումը բարդ գործընթաց է, ոչ ֆորմալ ձեռնարկություններն ու աշխատողները սովորաբար պաշտպանված չեն բնապահպանական կամ այլ օրենքներով, ինչը նրանց դարձնում է առավել խոցելի կլիմայի փոփոխության նկատմամբ:[19]

Կոոպերատիվները և այլ ՍՀՏ միավորները հաճախ գործում են խոցելի խմբերի և առավել անպաշտպան իրավիճակում գտնվող անձանց կարիքները բավարարելու նպատակով, ովքեր արդեն իսկ առավել ենթակա են կլիմայական ազդեցություններին: Այնուամենայնիվ, նման շատ կառույցներ գործում են կլիմայազգայուն ոլորտներում, ինչպիսին է գյուղատնտեսությունը, և կարող են բախվել այնպիսի ռիսկերի, ինչպիսիք են ցածր բերքատվությունը, եկամտի կորուստը, վարկային կամ սնանկության ռիսկերը և այլն:[20] Մինչդեռ շատ կոոպերատիվներ և այլ ՍՀՏ միավորներ մասնակցում են հանուն կլիմայի գործողություններին, նրանք հաճախ բախվում են տեխնիկական և ֆինանսական սահմանափակումների՝ հարմարվողականության կամ ցածր ածխածնային դիմակայություն ունեցող տնտեսության անցնելու ճանապարհին:

Խոշոր ձեռնարկությունները, այդ թվում՝ բազմազգ կորպորացիաները, նույնպես բախվում են իրենց գործունեության և աշխատողների համար կլիմայի ազդեցությունից առաջացող անմիջական ռիսկերի, ինչպես նաև ածխածնազերծման կամ հարմարվողականության հետ կապված մարտահրավերների: Նրանք կարող են նաև ստիպված լինել կողմնորոշվել տարբեր իրավասություններում գործող կլիմայական տարբեր կարգավորումների, ներդրողների առաջնահերթությունների փոփոխության, բնապահպանական, սոցիալական և կառավարման (ԲՍԿ) աճող սպասումների, սպառողների նախասիրությունների փոփոխությունների և հեղինակության ռիսկերի հետ: Բացի այդ, գլոբալացված մատակարարման շղթաներում կլիմայական ցնցումները հիմնական արտադրության կամ արդյունահանման վայրերում կարող են ազդել թե՛ տեղական տնտեսությունների, թե՛ սահմանից դուրս տնտեսական համակարգերի վրա:[21] Մատակարարման շղթաներում բազմաթիվ խոշոր ձեռնարկությունների, ՄՓՄՁ-ի, կոոպերատիվների և այլ ՍՀՏ միավորների միջև փոխկապակցվածությունը բարդության ևս մեկ շերտ է ավելացնում դիմակայուն ցածր ածխածնային տնտեսության անցման գործընթացում ներգրավված բազմազան ձեռնարկությունների համար:

18 Օրինակ՝ տե՛ս՝ ԱՄԿ, 2022. Կրկնակի անցում. ֆորմալացում և անցում դեպի շրջակա միջավայրի կայունություն՝ արժանապատիվ աշխատանքի հետ մեկտեղ; Սեպադի, ՄՄ 2025. Կլիմայի փոփոխության ազդեցությունը փողոցային ոչ ֆորմալ վաճառողների վրա. համակարգված վերանայում՝ Հարավային Աֆրիկային և այլ ազգերին օգնելու համար (2015–2024), Մթնոլորտ 16(2): 179:

19 ԱՄԿ, 2022. Ինչպես կարող է ՄՓՄՁ-ն նպաստել արդար անցմանը և օգտվել դրանից :

20 Օրինակ, տե՛ս ՝ Դենգ, Ս. և այլք, 2025: Եղանակային ցնցումների ազդեցությունը գյուղական վարկային կոոպերատիվների վրա: Ֆինանսական հետազոտական նամակներ, 75:

21 Օ՛Նիլ, Բ., և այլք: 2022թ. Հիմնական ռիսկերը տարբեր ոլորտներում և տարածաշրջաններում: Կլիմայի փոփոխություն 2022. Ազդեցություններ, հարմարվողականություն և խոցելիություն: II աշխատանքային խմբի ներդրումը Կլիմայի փոփոխության միջկառավարական խմբի վեցերորդ գնահատման զեկույցում: Քեմբրիջի համալսարանի հրատարակչություն, Քեմբրիջ, Մեծ Բրիտանիա և Նյու Յորք, Նյու Յորք, ԱՄՆ:

2.2. Մատակարարման շղթաներում բազմաթիվ խոշոր ձեռնարկությունների, ՄՓՄՁ-ի, կոոպերատիվների և այլ ՍՀՏ միավորների միջև փոխկապակցվածությունը բարդության ևս մեկ շերտ է ավելացնում դիմակայուն ցածր ածխածնային տնտեսության անցման գործընթացում ներգրավված բազմազան ձեռնարկությունների համար:

ԱՍԳ-ն մշակելիս կայուն ձեռնարկությունների միջոցով արդար անցման խթանման վրա կենտրոնանալն երկրներին տրամադրում է էական հիմնաքարեր, որոնք կարող են համահունչ լինել ազգային առաջնահերթություններին՝ միաժամանակ ապահովելով, որ հանուն կլիմայի գործողությունը կմեծացնի արժանապատիվ աշխատանքի հնարավորությունները՝ ստեղծելով ավելի շատ և ավելի լավ աշխատատեղեր:

Տնտեսական աճի ապահովում՝ սոցիալական, բնապահպանական և զբաղվածության ոլորտում ձեռքբերումներով

ԱՍԳ-ի իրականացումը կպահանջի բազմաթիվ առկա ոլորտների փոխակերպում և նոր՝ ցածր արտանետումներով ոլորտների զարգացում: Սա էապես կախված է գործող բիզնեսների փոխակերպումից և նոր ձեռնարկությունների ի հայտ գալուց: Այս համատեքստում տարբեր տեսակի և չափի կայուն ձեռնարկությունների վրա կենտրոնանալը կարող է նպաստել բնապահպանական ձեռքբերումների հետ մեկտեղ տնտեսական աճի խթանմանը՝ միաժամանակ խթանելով սոցիալական և զբաղվածության ձեռքբերումները:

Չնայած դեպի ցածր ածխածնային տնտեսություն անցումը կարող է որոշակի տնտեսական մարտահրավերներ առաջացնել, հնարավորությունները նշանակալի են: Օրինակ՝ մաքուր էներգիայի արտադրությունը կազմել է Չինաստանի ՀՆԱ-ի աճի մոտ 5 տոկոսը 2023 թվականին[22] ինչը ընդգծում է այդ ոլորտի ընդլայնվող դերը տնտեսությունում: Ավելին, մի շարք երկրներում մաքուր էներգիայի արտադրության մեջ ներդրումները զգալի աճ են ապրել՝ պայմանավորված արդյունաբերական աջակցության քաղաքականությունների և աճող շուկայական պահանջարկի շնորհիվ՝ ապահովելով համոզիչ տնտեսական արդարացում: Նման զարգացող կամ անցումային ոլորտներում կայուն ձեռնարկությունների զարգացումը ներուժ ունի ստեղծելու ավելի շատ աշխատատեղեր, բարելավելու աշխատանքային պայմանները և բարձրացնելու կենսամակարդակը:

Տնտեսական դիվերսիֆիկացման ապահովում՝ նոր բիզնես հնարավորությունների ստեղծման միջոցով

Կլիմայի փոփոխության համատեքստում տնտեսական դիվերսիֆիկացումը կարևոր նշանակություն ունի շատ երկրների համար, օրինակ՝ այն տարածքներում, որոնք մեծապես կախված են բարձր արտանետումներով ոլորտներից:[23] Այն կարող է բացահայտել նոր բիզնես հնարավորություններ, և տարբեր տեսակի և չափի կայուն ձեռնարկությունների զարգացման միջոցով խթանել նոր ոլորտների աճը և ընդլայնել տնտեսական գործունեության շրջանակը: Արդար անցումը կարող է օգնել ներառականորեն կառավարել այս փոփոխությունները, միաժամանակ նպաստելով երկարաժամկետ տնտեսական աճին և արժանապատիվ աշխատատեղերի ստեղծմանը: Մի շարք երկրներում նոր տնտեսական կուտակումների

22 Կոզի, Լ. և այլք: 2024թ. Մաքուր էներգիան խթանում է տնտեսական աճը: ՄԷԳ:

23 ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիան կլիմայի փոփոխության մասին, 2016: Տնտեսական դիվերսիֆիկացման հայեցակարգը արձագանքման միջոցառումների համատեքստում: Տեխնիկական փաստաթուղթ:

(կլաստերների) զարգացումը, ՄՓՄՁ-ին աջակցությունը և ոչ ֆորմալ տնտեսության ֆորմալացումը դառնում են հիմնական ռազմավարական ուղիները:[24] Բացի այդ, կայուն ձեռնարկությունների զարգացման վրա կենտրոնանալը որպես տնտեսական դիվերսիֆիկացման ջանքերի մաս կարող է ծառայել բիզնեսի արտադրողականության, նորարարության և մրցունակության բարձրացմանը:

Կլիմայի մեղմման և հարմարվողականության նպատակների իրականացում՝ կանաչ և դիմակայուն բիզնեսների միջոցով

Տարբեր տեսակի և չափի ձեռնարկությունները կարող են բացասական բնապահպանական ազդեցություն ունենալ: Օրինակ՝ ՓՄՁ-ն կազմում է Եվրոպայում արդյունաբերական աղտոտման 64 տոկոսը,[25] մինչդեռ ոչ ֆորմալ տնտեսության մեջ գործող տնտեսական միավորները, որոնցից շատերը կախված են բնական ռեսուրսներից և գործում են կարգավորող շրջանակներից դուրս, նույնպես բնապահպանական ռիսկեր են առաջացնում:[26] Միևնույն ժամանակ, շատ ձեռնարկություններ խիստ խոցելի են կլիմայի ազդեցությունների նկատմամբ և չունեն դիմակայունություն (տե՛ս ենթաբաժին 2.1): Կայուն ձեռնարկությունների զարգացման ինտեգրումը ԱՍԳ-ի մեջ կարող է առաջ մղել թե՛ մեղմման, թե՛ հարմարվողականության նպատակները՝ զբաղվածության ձեռքբերումների հետ մեկտեղ: Ձեռնարկությունների ածխածնազերծումը և դիմակայունության բարձրացումը նաև ձևավորում են ամուր բիզնես հիմնավորում, քանի որ դրանք կարող են հնարավորություն տալ մուտք գործել նոր շուկայական հնարավորությունների դաշտ, բարձրացնել արտադրողականությունը և նորարարությունը, ինչպես նաև նվազեցնել կլիմայական ռիսկերը:

Մեղմման նպատակներին աջակցելու համար հնարավոր է նվազեցնել արտանետումները՝ ցածր արտանետումներ ունեցող ոլորտներում կայուն ձեռնարկությունները զարգացնելով և իրականացնելով ձեռնարկությունների ածխածնազերծում, օրինակ՝ կանաչապատման գործողություններ, ռեսուրսների և էներգիայի արդյունավետության բարելավում, շրջանաձև տնտեսության պրակտիկայի կիրառում կամ կայուն բիզնես մոդելների ներդրում: Հարմարվողականության ուղղությամբ կայուն ձեռնարկությունների, այդ թվում՝ ՄՓՄՁ և կոոպերատիվների, ինչպես նաև այլ ՍՀՏ միավորների զարգացումը կարող է ամրապնդել բիզնեսների կողմից հարմարվողականության համար անհրաժեշտ տեխնիկական կարողությունները և ֆինանսական հասանելիությունը, ինչպես նաև նպաստել ապահովագրական ծածկույթի հասանելիությանը՝ կլիմայական ցնցումներին դիմակայելու համար: Զարգացող հարմարվողականության ոլորտները, ինչպիսիք են կլիմայական խորհրդատվական ծառայությունները կամ էկոհամակարգի վրա հիմնված լուծումները, ի թիվս այլոց, նույնպես կարող են հնարավորություններ ներկայացնել կայուն ձեռնարկությունների զարգացման, աշխատողների պաշտպանության և աշխատատեղերի ստեղծման համար:[27]

Բացի այդ, ոչ ֆորմալ ձեռնարկությունների ֆորմալացումը ներուժ ունի խթանելու ավելի արդյունավետ բնապահպանական գործելակերպերը, ճանաչելու այն բնապահպանական ծառայությունները, որոնք արդեն մատուցվում են, միաժամանակ պաշտպանելով աշխատուժի լայն հատված, հատկապես զարգացող երկրներում: Օրինակ, կոոպերատիվներն ու այլ ՍՀՏ միավորները կարող են ոչ միայն նպաստել ֆորմալացմանը, այլև ամրապնդել համայնքի ներգրավվածությունը և խթանել կայունության սկզբունքներին և արժանապատիվ աշխատանքի չափանիշներին համապատասխանող ձեռնարկությունները:[28]

Բազմաթիվ ձեռնարկությունների համար բնապահպանական կայունությունը դարձել է տնտեսական կատարողականի հետ մեկտեղ հիմնական գործոն:[29] Ոմանք նաև մասնակցում են ածխածնի շուկաներին:[30] Պատասխանատու գործարար վարքագիծ որդեգրելով[31]՝ նման ձեռնարկությունները կարող են ձեռնարկել մեղմման և հարմարվողականության ջանքեր՝ միաժամանակ կառավարելով այդ միջոցառումների

24 Օրինակ, տե՛ս՝ Նախագահական կլիմայի հանձնաժողով, 2022թ. Հարավային Աֆրիկայում արդար անցման շրջանակ:

25 ԱՄԿ, 2022. Կանաչ դարձնելով ձեռնարկությունները. գործընթացների և աշխատավայրերի փոխակերպում:

26 ԱՄԿ, 2022: Կրկնակի անցում. ֆորմալացում և անցում դեպի շրջակա միջավայրի կայունություն՝ արժանապատիվ աշխատանքի հետ մեկտեղ:

27 Օրինակ, տե՛ս՝ ԱՄԿ, 2018. Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազդեցությունը զբաղվածության վրա: G20-ի Կլիմայի կայունության աշխատանքային խմբի մուտքային փաստաթուղթ:

28 Օրինակ՝ տե՛ս՝ ԱՄԿ, 2019. Աղբահավաքների կոոպերատիվներ և սոցիալական ու համերաշխության տնտեսության կազմակերպություններ; ԱՄԿ, 2016. Համագործակցային միջոց բնիկ ժողովուրդներին հզորացնելու համար:

29 ԱՄԿ, 2022. Կանաչ դարձնելով ձեռնարկությունները. գործընթացների և աշխատավայրերի փոխակերպում:

30 Օրինակ՝ տե՛ս՝ ԵՄ արտանետումների առևտրային համակարգ

31 Ավելի շատ տեղեկությունների համար տե՛ս՝ ԱՄԿ Օգնության ծառայություն. Բիզնեսը և արդար անցումը:

սոցիալական հետևանքները: Օրինակ, կայուն ձեռնարկությունները կարող են աջակցել արդար անցման գործընթացին՝ պահպանելով աշխատանքի հիմնարար սկզբունքների և իրավունքների նկատմամբ հարգանքը, անցկացնելով մարդու իրավունքների պահպանման համապարփակ գնահատում՝ անցումային գործընթացների ցանկացած բացասական ազդեցություն հասցեագրելու համար, և ավելացնելով արժանապատիվ զբաղվածության հնարավորությունները:

Նորարարության և տեխնոլոգիաների փոխանցման խթանում

Նորարարությունը կենսական նշանակություն ունի կլիմայի փոփոխության հաղթահարման համար, քանի որ բազմազան ձեռնարկությունները նպաստում են ցածր արտանետումների տեխնոլոգիաների զարգացմանը, ավելի կանաչ արտադրությանը և բարելավում են թափոնների կառավարումը: Այն ներկայացնում է ամուր բիզնես հիմնավորում՝ բարձրացնելով արդյունավետությունը, նվազեցնելով ծախսերը և բացելով նոր շուկաներ: Նորարարությունը կարող է նաև խթանել արդյունաբերության զարգացումը և տնտեսության դիվերսիֆիկացումը՝ միաժամանակ բարձրացնելով դիմակայունությունը, խթանելով մրցունակությունը և ստեղծելով աշխատատեղեր:[32]

Շատ զարգացող երկրների համար տեխնոլոգիաների փոխանցումը կարևորագույն նշանակություն ունի էկոլոգիապես նպաստավոր տեխնոլոգիաների հասանելիության և դրանց ներդրման համար: Կայուն ձեռնարկությունները կարող են առանցքային դեր խաղալ նման տեխնոլոգիաների ներդրման և տեղայնացման գործում: Նախաձեռնությունները ավելի ու ավելի են ընդլայնում կապերը տեխնոլոգիաների մատակարարների և օգտագործողների միջև՝ այդ թվում՝ ներառելով թե՛ բազմազգ ընկերություններին, թե՛ ՓՄՁ-ին:[33] Այնուամենայնիվ, ֆինանսավորման հասանելիության բացակայությունը շարունակում է մնալ էական խոչընդոտ, մասնավորապես՝ ՄՓՄՁ-ի համար, որոնք չունեն բավարար ռեսուրսներ նորարարության մեջ ներդրումներ կատարելու համար:

Ավելին, նորարարությունն առևտրային ձևաչափերի և բիզնես մոդելների մեջ, օրինակ՝ ՍԱՏ միավորների կողմից կիրառվող մոդելների շրջանակում,[34] կարող է նաև խթանել հանուն կլիմայի գործողությունը՝ միաժամանակ ստեղծելով սոցիալական արժեք:

Մատակարարման և արժեքի շղթաների ամրապնդում

Համաշխարհային և ներքին մատակարարման ու արժեքի շղթաների համար կլիմայական ռիսկերի աճի պայմաններում կայուն ձեռնարկությունները կարևոր դեր ունեն դիմակայունության բարձրացման, արտանետումների կրճատման և բիզնեսի շարունակականության ապահովման գործում: Օրինակ, Շուկայական համակարգերի զարգացման (ՇՀՁ) մոտեցումը կարող է աջակցել արժեքի շղթաների շրջանակներում գործող ՄՓՄՁ-ին և կոոպերատիվներին՝ շրջակա միջավայրի և արժանապատիվ աշխատանքի մարտահրավերները հաղթահարելու համար:[35] Բացի այդ, վերջնական արտադրանքներ արտադրող և սպառողին մատակարարող ընկերությունները կարող են աջակցել մատակարարներին, օրինակ ՄՓՄՁ-ին, բարելավել կառավարման գործելաոճերը, արտադրանքի որակը և համապատասխանությունը չափանիշներին, միաժամանակ ապահովելով ներդրումներ, երկարաժամկետ պայմանագրեր և նախնական կապիտալ՝ արդիականացումները դյուրացնելու համար:[36] Խոշոր ձեռնարկությունները, պատասխանատու բիզնես գործելաոճ ընդունելով, կարող են նաև օգնել կառուցել կլիմայի նկատմամբ դիմակայուն մատակարարման և արժեքի շղթաներ՝ միաժամանակ ապահովելով աշխատանքային իրավունքների հանդեպ անցման սոցիալական ազդեցությունների համապարփակ գնահատումը:

Չանտեսելով ոչ մի բիզնես և ոչ մի աշխատող

Որպեսզի ԱՍԳ-ն արդյունավետորեն հասցեագրի արդեն իսկ սոցիալ-տնտեսական խոցելիություն ունեցող անձանց՝ կանանց, բնիկ և ցեղային ժողովուրդների, հաշմանդամություն ունեցող անձանց և այլոց կարիքները՝ շատ կարևոր է հաշվի առնել նրանց առաջ կանգնած կոնկրետ մարտահրավերները և

32 Օրինակ, տե՛ս՝ Նախագահական կլիմայի հանձնաժողով: 2022թ. Հարավային Աֆրիկայում արդար անցման շրջանակ:

33 Օրինակ՝ տե՛ս՝ WIPO GREEN – Կայուն տեխնոլոգիաների շուկա:

34 Ավելի շատ տեղեկությունների համար տե՛ս՝ ՍԱՏ. Բնապահպանական կայունություն:

35 ԱՄԿ, 2024: Արդար անցման համար շուկայական համակարգերի զարգացում. ի՞նչ է դա իրականում նշանակում դոնորների և մասնագետների համար:

36 ԱՄԿ, 2022: Ինչպես կարող է ՄՓՄՁ-ն նպաստել արդար անցմանն և օգտվել դրանից:

օգտագործել ի հայտ եկող հնարավորությունները: Արդար անցումը և կայուն ձեռնարկությունների զարգացումը կարող են հնարավորություն ստեղծել բազմազան խմբերի՝ ներգրավվելու հանուն կլիմայի գործողությանը՝ որպես աշխատողներ և որպես գործատուներ: Օրինակ, Կանանց ձեռներեցության զարգացման (ԿՁՁ) ինտեգրումը անցման գործընթացներում կարող է օգնել հաղթահարել համակարգային սոցիալ-տնտեսական խոչընդոտները և հզորացնել կանանց՝ որպես կանաչ տնտեսության նորարարների:[37]

Ավելին, շատ զարգացող երկրներում խոցելի խմբերը հաճախ ներգրավված են ոչ ֆորմալ տնտեսության մեջ: Այս առումով, աջակցումը ՄՓՄՁ-ին, կոոպերատիվներին և այլ ՍՀՏ միավորներին կարող է զգալիորեն նպաստել դրանց դիմակայունության, տնտեսական հզորացման և ֆորմալացման գործընթացներին:[38] Պատասխանատու գործարար վարքագծին առնչվող նախաձեռնությունները նույնպես կարող են արժեքավոր դեր խաղալ այս ջանքերին աջակցելու գործում: Բացի այդ, արդյունավետ միջամտությունները կարող են ուղղորդել տվյալահեն քաղաքականությունների մշակումն՝ օրինակ՝ ռազմավարական ոլորտների վերաբերյալ ուսումնասիրությունների անցկացումը և բազմազան ձեռնարկությունների առջև ծառացած հիմնական մարտահրավերների և հնարավորությունների ուրվագծումը:

Արդար անցման համար ֆինանսական ներդրումների խթանում

Կայուն ձեռնարկությունների զարգացման նպատակային ֆինանսական ներդրումը կարևոր նշանակություն ունի արդար անցման և արժանապատիվ աշխատանքի ստեղծման համար: ՄՓՄՁ-ից և կոոպերատիվներից մինչև խոշոր ընկերություններ, ձեռնարկությունները կայուն գործելակերպեր ներդնելու, ածխածնազերծելու, դիմակայունություն ձևավորելու կամ ձեռնարկության մակարդակում անցումներ՝ սկսած հմտությունների զարգացումից մինչև նորարարություն իրականացնելու համար կարիք ունեն ֆինանսավորման և ապահովագրության հասանելիության: Այնուամենայնիվ, ֆինանսավորման սահմանափակ հասանելիությունը շարունակում է մնալ լուրջ խոչընդոտ, հատկապես՝ բարձր նախնական ծախսեր կամ ենթադրյալ ռիսկեր ունեցող նախաձեռնությունների համար, ինչը դանդաղեցնում է դիմակայուն ցածր ածխածնային տնտեսության անցման գործընթացը:

Թեև հանրային ֆինանսավորումը Էական է այնպիսի ոլորտների համար, ինչպիսիք են սոցիալական պաշտպանությունը, վերապատրաստումը և վերականգնումը, մասնավոր ֆինանսավորումը հատկապես կարևոր է գործողությունների ընդլայնման համար: ԱՍԳ-ն կարող է կլիմայական պարտավորություններին կից ուղեկցվել համապարփակ ֆինանսավորման ռազմավարություններով, որոնք հստակորեն կենտրոնանում են արդար անցման և կայուն ձեռնարկությունների զարգացման վրա: Բացի այդ, օրինակները ցույց են տալիս, որ ավելի ակտիվ կլիմայական քաղաքականություն ունեցող երկրները հակված են ներգրավել ավելի մեծ ծավալի կանաչ, «զրոյից սկսող» Արտաքին ուղղակի ներդրումներ (ԱՈՒՆ):[39] .

Ֆինանսական հաստատությունները՝ սկսած զարգացման բանկերից, առևտրային բանկերից և միկրոֆինանսական հաստատություններից (ՄՖՀ), ՍՀՏ ֆինանսական կառույցներից և մասնավոր ներդրողներից մինչև ապահովագրական ընկերությունները, կարող են առանցքային դեր խաղալ:[40] Համագործակցության և ռիսկերի համատեղ կառավարման միջոցով նրանք կարող են ընդլայնել կապիտալի հասանելիությունը բոլոր տեսակի և չափի ձեռնարկությունների համար, ներառյալ ՄՓՄՁ-ը, կոոպերատիվները և այլ ՍՀՏ միավորները: Ապահովագրությունը հատկապես կարևոր է ենթադրյալ ռիսկերի նվազեցման, վարկային հասանելիության մեծացման և կլիմայի փոփոխության հարմարվողականության աջակցման գործում: Բանկերն ու ներդրողները կարող են կապիտալ ներգրավել՝ օգտագործելով կանաչ, սոցիալական և կայունության հետ կապված ապրանքներ և գործիքներ, այդպիսով խրախուսելով սոցիալապես շրջակա միջավայրի համար պատասխանատու բիզնես գործելակերպը:

37 Օրինակ՝ տե՛ս՝ ԱՄԿ, 2024. Եգիպտոսում կանանց ձեռներեցության զարգացման և գենդերային հավասարության խթանում՝ արդար անցման համար:

38 Օրինակ՝ տե՛ս՝ ԱՄԿ, 2022. Բնիկ ժողովուրդներ և արդար անցում բոլորի համար; ԱՄԿ, 2019. Աղբահավաքների կոոպերատիվներ և սոցիալական ու համերաշխության տնտեսության կազմակերպություններ; ԱՄԿ, 2016. Համագործակցային միջոց բնիկ ժողովուրդներին հզորացնելու համար:

39 Փիենկնագուրա, Ս. 2024թ. Կլիմայական քաղաքականությունները որպես խթանիչ կանաչ ԱՈՒՆ-ի համար: ԱՄՀ Աշխատանքային փաստաթուղթ:

40 Օրինակ՝ տե՛ս՝ ԱՄԿ և ՄԱԿ-ի ՇՄԾ ֆինանսական նախաձեռնություն: 2023թ. Արդար անցման ֆինանսներ. ուղիներ բանկային և ապահովագրական ոլորտների համար:

3. Ինչպիսի՞նն է ԱՍԳ-ում կայուն ձեռնարկությունների ընդգրկման ներկայիս իրավիճակը:

ԱՄԿ-ի[41] կողմից 2024 թ. հուլիսի 12-ին ներկայացված ԱՍԳ-ի քարտեզագրումը ցույց է տալիս, որ 193 երկրներից 72-ը (39 տոկոս) իրենց երկրների ԱՍԳ-ում բացահայտ հղումներ են կատարել արդար անցմանը՝ ցույց տալով, որ այս թեման սկսել է որոշակի ուշադրություն գրավել կլիմայի ազգային պլանավորման շրջանակում: Սակայն, արդար անցմանը նվիրված բաժինները հազվադեպ են հանդիպում՝ ԱՍԳ-ի միայն 6 տոկոսում են դրանք ներառված: Այնուամենայնիվ, ԱՍԳ-ի մեծ մասը (68 տոկոս) ներառում է զբաղվածության հետ կապված հասկացությունների հղումներ, ինչը վկայում է հանուն կլիմայի գործողության և աշխատատեղերի միջև կապի աճող ճանաչմանը:

Կարևոր է նշել, որ ԱՄԿ քարտեզագրումը զգալի հղումներ է արձանագրում ձեռնարկությունների քաղաքականության տարրերին, որոնք կարող են ներառել բիզնեսի աջակցության համար այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են՝ կայուն ձեռնարկությունների զարգացման, արտադրողականության աճի և նորարարության համար նպաստավոր միջավայրի ստեղծումը, ՄՓՄՁ-ին աջակցությունը, պատասխանատու գործարար վարքագծի հետ կապված նախաձեռնությունները, ձեռներեցությունը, ինչպես նաև մատակարարման և արժեքի շղթաները: Ամբողջ աշխարհում երկրների 56 տոկոսը իրենց ԱՍԳ-ում հղում են կատարում ձեռնարկությունների քաղաքականության տարրերին: Այս առումով առաջատարը բարձր և միջինից ցածր եկամուտ ունեցող երկրներն են՝ համապատասխանաբար 65 և 64 տոկոս ցուցանիշներով: Տարածաշրջանային մակարդակում Եվրոպան և Կենտրոնական Ասիան իրենց ԱՍԳ-ում ունեն ձեռնարկությունների քաղաքականության հետ կապված տարրերի ամենաբարձր ցուցանիշը՝ 69 տոկոս, որին հաջորդում է Աֆրիկան՝ 60 տոկոսով: Սա վկայում է աջակցող քաղաքականության միջավայրի և այն միջոցառումների կարևորության որոշակի գիտակցման մասին, որոնք թույլ են տալիս ձեռնարկություններին նպաստել ցածր ածխածնային տնտեսությունների անցմանն: Այնուամենայնիվ, այն նաև ընդգծում է այս քաղաքականության ոլորտի հանդեպ հետագա ուշադրության անհրաժեշտությունը՝ տնտեսական աճի, կայուն զարգացման և արժանապատիվ աշխատանքի խթանման գործում ունեցած կարևորության պատճառով:

41 ԱՄԿ, 2024թ. Արդար անցման քարտեզագրումը ԱՍԳ-ում:

4. Ի՞նչ պետք է հիշել կայուն ձեռնարկությունները ԱՍԳ-ում ներառելիս:

Գործընթացն է ձևավորում ձևը

ԱՍԳ-ն մշակելիս կամ իրականացնելիս սոցիալական երկխոսությունը հիմնարար նշանակություն ունի տնտեսության իրական դերակատարների, մասնավորապես՝ աշխատողների և գործատուների կազմակերպությունների հեռանկարներն ու մտահոգությունները հասկանալու համար: Այս գործընթացում արդյունավետ սոցիալական երկխոսության ապահովումը նպաստում է «արդար անցման» գաղափարի խարսխմանն իրական մարտահրավերների և հնարավորությունների մեջ, այդ թվում՝ կայուն ձեռնարկությունների խթանման առումով: Աշխատողների և գործատուների կազմակերպությունների ու աշխատանքի նախարարությունների մասնակցությունը, ինչպես նաև այլ համապատասխան նախարարությունների համակարգումը և շահագրգիռ կողմերի ներգրավումը խթանում է գործողություն հանուն կլիմայի ներգրավվածության համընդհանուր զգացումը՝ նպաստելով կայուն զարգացման բոլոր երեք հենասյուներին՝ սոցիալական, տնտեսական և բնապահպանական բաղադրիչներով հանդերձ:

Արդար անցման ամրագրում ԱՍԳ-ում

ԱՍԳ-ում կլիմայի նպատակների և արդար անցման միջև ամուր կապերի հաստատման համար Էական կլինի հասցեագրել հանուն կլիմայի գործողության սոցիալական և զբաղվածության բաղադրիչները: Սա նաև ամրապնդում է կայուն ձեռնարկությունների զարգացման և արժանապատիվ աշխատանքային հնարավորությունների ստեղծման նկատմամբ հանձնառությունները՝ ապահովելով, որ կլիմայական քաղաքականությունները հիմնված լինեն սոցիալ-տնտեսական իրողությունների վրա և աջակցեն կայուն զարգացմանը: Համապարփակ մոտեցում ապահովելու համար, ԱՄԿ ուղեցույցներում ներկայացված քաղաքականության ինը ոլորտները կարող են հստակ ի ցույց դրվել:.

Օրինակ՝ Հարավաֆրիկյան Հանրապետություն (2021)

«Հարավաֆրիկյան Հանրապետությունում արդար անցումը կենտրոնական նշանակություն ունի մեր զարգացման ուղին դեպի ավելի կայուն, կլիմայի փոփոխությանը դիմակայուն և ցածր ջերմոցային գազերի արտանետումներով զարգացումը խթանելու, միաժամանակ բոլորի համար ավելի լավ կյանք ապահովելու հարցում»:

Օրինակ՝ Բրազիլիա (2024)

«Բրազիլիայի ներքին տեսանկյունից, վերանայման փուլում գտնվող Կլիմայի փոփոխության ազգային քաղաքականությունն աննախադեպ կերպով կներառի իր իրավական շրջանակում արդար անցման և կլիմայական արդարության հասկացությունները: Առանց Բրազիլիայի իրավական համակարգում ամրագրված այլ սահմանումների հանդեպ նախապաշարմունքի՝ Բրազիլիան համարում է «արդար» սոցիալ-տնտեսական զարգացման մոդելի այն անցումը, որը ցածր ջերմոցային գազերի արտանետումներով և կլիմայական փոփոխություններին դիմակայելու կարողություն ունի՝ կայուն զարգացման և աղքատության վերացման ջանքերի համատեքստում»:

Օրինակ

Տարբեր կայուն ձեռնարկությունները որպես գործողություն հանուն կլիմայի և արժանապատիվ աշխատանքի շարժիչ ուժերa

ԱՍԳ-ի համար տարբեր ձևի և չափերի կայուն ձեռնարկությունների, այդ թվում՝ ՄՓՄՁ-ի, կոոպերատիվների և այլ ՍՀՏ միավորների դերի հստակ ընդգծումը կարևորագույն նշանակություն կունենա զբաղվածության ձեռքբերումների համար: ԱՍԳ-ն կարող է նաև ընդգծել արժանապատիվ աշխատատեղերի ստեղծման հետ կապված մարտահրավերներն ու հնարավորությունները, հատկապես՝ ոչ ֆորմալ աշխատողների, կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց, բնիկ ու ցեղային ժողովուրդների և նրանց, ովքեր արդեն իսկ սոցիալ-տնտեսապես խոցելի են: Կայուն ձեռնարկությունների խթանմանը կենտրոնացած մոտեցումը՝ թե՛ մեղմման, թե՛ հարմարվողականության միջոցառումների առումով, կարող է նաև կապվել որոշակի ոլորտների հետ:

Օրինակ՝ Հարավաֆրիկյան Հանրապետություն (2021)

«Հարավաֆրիկյան Հանրապետությունը կձգտի զարգացնել փոքր, միջին և միկրոձեռնարկությունները, այդ թվում՝ էներգետիկ ծառայություններ մատուցող ընկերությունները, նորարարական տեխնոլոգիաներ ներդնելու և կայուն աշխատատեղեր ստեղծելու համար»:

Օրինակ՝ Մոլդովայի Հանրապետություն (2020)

«Խթանել ՓՄՁ-ների համագործակցությունը այլ բիզնեսների կամ հանրային կառույցների հետ՝ ոլորտային կամ տարածաշրջանային մակարդակներում գործընկերություններ և կոոպերատիվներ ձևավորելու, ռեսուրսներ և ֆինանսավորում համախմբելու՝ տնտեսական և եղանակային ցնցումներից ինքնաապահովագրվելու համար»:

Օրինակ՝ Ուգանդա (2022)

«Չնայած ստեղծված նոր աշխատատեղերի 65%-ը գտնվում է ուրբանական կենտրոններում, ուրբանական տարածքներն արդյունավետ չեն եղել ֆորմալ աշխատավարձերի աճի և աշխատատեղերի ստեղծման խթանման հարցում՝ մեծ չափով ոչ ֆորմալ հատվածի առկայության պատճառով: Ուգանդան ունի երկակի տնտեսություն, որտեղ ոչ ֆորմալ հատվածը զգալի մասնաբաժին է կազմում ՀՆԱ-ում (51%): Մասնավոր հատվածում գերակշռում են միկրո, փոքր և միջին ձեռնարկությունները, որտեղ աշխատում են մոտ 2.5 միլիոն մարդ: Ոչ ֆորմալ տնտեսության չափը և ազդեցությունը մեծ մրցակցություն են ստեղծում, ինչը սահմանափակում է ֆորմալ ձեռնարկությունների չափը»:.

Օրինակ՝ Զիմբաբվե (2025)

Կենտրոնանալով զբոսաշրջության ոլորտի վրա՝ հարմարվողականության առաջնահերթ արդյունք է. «Էկոտուրիզմի ձեռնարկությունների ստեղծում և/կամ աջակցություն»-ը:

Օրինակ

Կայուն ձեռնարկությունների համար նպաստավոր միջավայրի ներդրում

Նպաստավոր միջավայրը վերաբերում է այն պայմանների համակցությանը, որոնք ազդում են ձեռնարկության գործունեություն սկսելու, աճելու և արժանապատիվ աշխատատեղեր ստեղծելու կարողության վրա: Չնայած ԱՍԳ-ն նախևառաջ կլիմայական ծրագիր է, դա նաև ծառայում է որպես ազգային ներդրումային և զարգացման ծրագիր, և դրա իրագործումը կարող է չնախատեսված բացասական ազդեցություն ունենալ տարբեր տեսակի և չափի ձեռնարկությունների վրա: Այնուամենայնիվ, եթե դա խթանում է կայուն ձեռնարկությունների համար նպաստավոր միջավայր, ԱՍԳ-ն կարող է

առաջարկել քաղաքականության որոշակիություն և հստակ պարտավորություն մի շարք ոլորտներում, ինչպիսիք են ձեռնարկատիրական ծրագրերի աջակցությունը, բիզնեսի զարգացման ծառայությունների մատուցումը, պետական գնումների համակարգի օգտագործումը, խթանների կամ սուբսիդիաների տրամադրումը, կարգավորող կամ քաղաքականության բարեփոխումների իրականացումը և այլն: Նպաստավոր միջավայրը ներուժ ունի բարելավելու տնտեսական հեռանկարները, մասնավորապես՝ ՄՓՄՁ-ների և ՍՀՏ միավորների համար, հաղթահարել արժանապատիվ աշխատանքի բացերը, խթանել արտադրողականության արդյունավետությունը և նպաստել ոչ ֆորմալ տնտեսության մեջ տնտեսական միավորների ֆորմալացմանը՝ միաժամանակ ապահովելով, որ տնտեսական գործունեությունը մնա էկոլոգիապես կայուն: Նպաստավոր միջավայրի խթանումը կարող է նաև ենթադրել ԱՍԳ-ում մանրամասն նկարագրված արդյունաբերական քաղաքականության կամ այլ կառուցվածքային փոխակերպման ծրագրերի կապակցումը կայուն ձեռնարկությունների զարգացման և արժանապատիվ աշխատանքի ստեղծման նպատակների հետ: Բացի այդ, ԱՍԳ-ն կարող է ներառել նաև տեխնիկական աջակցության տրամադրման և տարբեր տեսակի ու չափի ձեռնարկություններին անցման գործընթացը հաղթահարելու կարողությամբ զինման պարտավորություններ:

Օրինակ՝ Օման (2023)

«Կձևավորվի ցածր ածխածնային բիզնես միջավայր՝ որտեղ մասնավոր հատվածը կստանձի առաջատար դեր և լիազորված կլինի խթանելու արդար տնտեսական աճն: Այս լիազորումը նպատակ ունի ստեղծել մրցունակ և նպաստավոր միջավայր մասնավոր հատվածի համար՝ խթանելով ազատ, սոցիալապես պատասխանատու և շրջակա միջավայրի համար կայուն արդյունաբերությունների զարգացումը»:

Օրինակ՝ Մոլդովայի Հանրապետություն (2020)

«Առաջ մղել կարգավորող և ֆինանսական խթանները, որոնք կարող են նպաստել ռիսկերի նվազեցմանը մասնավոր հատվածի դերակատարների շրջանում: Կառավարությունը պետք է դիտարկի խթաններ և համապատասխանության միջոցառումներ՝ խրախուսելու ՓՄՁ-ին կլիմայական դիմակայունության և բիզնեսի զարգացման ոլորտում ներդրումներ կատարելու համար»:

Օրինակ՝ Բրազիլիա (2024)

Բրազիլիայի ԱՍԳ-ն սահմանում է Էկոլոգիական փոխակերպման ծրագիրը (ԷՓԾ) «ԱՍԳ-ն որպես ներդրումային հարթակ» հովանու ներքո: Փաստաթղթում նշվում է. «Որպես Բրազիլիայի կայուն զարգացման ներդրումային ծրագիր, Էկոլոգիական փոխակերպման ծրագիրը (ԷՓԾ) կվերակառուցի ազգային տնտեսական դինամիկան՝ խթանելու կայուն զարգացումը՝ հիմնվելով տեխնոլոգիական նորարարության և բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման վրա: Աջակցելով Կլիմայական ծրագրի իրականացմանն՝ ԷՓԾ-ն կպատասխանի կլիմայական ճգնաժամի պայմաններում մեղմման և հարմարվողականության կարիքներին՝ միաժամանակ վերատեղադրելով Բրազիլիայի տնտեսությունը ցածր ածխածնային տնտեսական աճի նոր ցիկլի մեջ: Ծրագիրը կբարձրացնի տնտեսական արտադրողականությունը՝ ստեղծելով արժանապատիվ աշխատանք, խթանելով կլիմայական արդարությունը և նվազեցնելով տարածաշրջանային, գենդերային և ռասայական անհավասարությունները»:

Օրինակ

Կենտրոնանալով մատակարարման և արժեքի շղթաների զարգացման ու ուժեղացման վրա

ԱՍԳ-ն կարող է ուրվագծել նոր ապրանքային կամ հումքով պայմանավորված մատակարարման և արժեքի շղթաների մշակման ուղիներ, որոնք կամրապնդեն տեղական տնտեսությունները և կծառայեն իբրև բազմապատկող մեխանիզմներ՝ արժանապատիվ աշխատանքի հնարավորությունների ընդլայնման համար: Միևնույն ժամանակ, առկա մատակարարման և արժեքի շղթաների հզորացումը ևս կարևոր է՝ հաշվի առնելով կլիմայական ազդեցություններից և անցումային միջոցառումներից բխող սպառնալիքները, որոնք կարող են հետևանքներ ունենալ թե՛ ձեռնարկությունների, թե՛ զբաղվածության վրա:

Օրինակ՝ Շրի Լանկա (2021)

«Գյուղատնտեսության ոլորտում ջերմոցային գազերի կրճատումը պետք է իրականացվի մի քանի հիմնական ռազմավարությունների կիրառմամբ: Այդպիսի քայլերից մեկը բերքի արտադրության դիվերսիֆիկացումն է՝ շատ ջուր պահանջող բրնձի մշակումից մինչև արտահանման մեծ պահանջարկ ունեցող բարձրարժեք մշակաբույսեր: Այլ քայլ է արժեքի ավելացման բարելավումը և փոքր ֆերմերներին ժամանակակից գյուղատնտեսական արժեքի շղթաներում ավելի լավ ինտեգրումը, նվազեցնելով բերքի կորուստը»:

Օրինակ՝ Բրազիլիա (2024)

ԱՍԳ-ն ուրվագծում է Մեղմման ազգային նպատակները, որոնք «սահմանվել են որպես ջերմոցային գազերի արտանետումների կրճատման առավել համապատասխան գործողությունների ուղղությունների սահմանման հիմք, ինչին նախընտրելի է ուղղել պետական և մասնավոր ներդրումներն ու ջանքերը»: Դրանք ներառում են՝

- *Կայուն կենսավառելիքի արտադրության ընդլայնում, տեխնոլոգիական նորարարության խթանում և կենսաէներգիայի հետ կապված արժեքի շղթաների զարգացում:*
- *Շրջանաձևության խթանում արտադրական շղթաներում բնական ռեսուրսների կայուն և արդյունավետ օգտագործման միջոցով:*

Էկոլոգիական փոխակերպման ծրագրի համաձայն՝ ԱՍԳ-ում նաև նշվում է. «Երկիրը կօգտվի իր բնապահպանական և կայունության համեմատական առավելություններից՝ մատակարարման շղթաների տեխնոլոգիական հարստացումը խթանելու, ինչպես նաև ազգային արտադրական կառուցվածքն ընդլայնելու և արդիականացնելու համար»:

Օրինակ

Պատասխանատու գործարար վարքագծի խթանում (ՊԳՎ)

ԱՍԳ-ում պատասխանատու գործարար վարքագծի խթանումն օգնում է հանուն կլիմայի գործողությունները համապատասխանեցնել այնպիսի գործարար գործելաոճերին, որոնք նպաստում են արժանապատիվ աշխատանքի ստեղծմանը: Այս համատեքստում կարևոր են ՊԳՎ-ի վերաբերյալ հիմնական միջազգային փաստաթղթերը, մասնավորապես՝ ԱՄԿ-ի՝ բազմազգ ձեռնարկություններին և սոցիալական քաղաքականությանն առնչվող սկզբունքների եռակողմ հռչակագիրը (ԲԱԶ Հռչակագիր), Մարդու իրավունքների վրա բիզնեսի ազդեցության մասին ՄԱԿ-ի առաջնորդող սկզբունքները և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Պատասխանատու բիզնես վարքագծի վերաբերյալ բազմազգ ձեռնարկությունների համար ուղեցույցը: Հաշվի առնելով հանուն կլիմայի գործողությունների իրականացման գործում բիզնեսների կարևորագույն դերը՝ ՊԳՎ-ի խթանումը նպաստում է սոցիալական և բնապահպանական վնասի ռիսկի նվազեցմանը՝ միաժամանակ խթանելով արժանապատիվ աշխատանքը, սոցիալական ներառումը և տնտեսական դիմակայունությունը: Այն նաև նպաստում է արդար անցմանն աջակցող և արժանապատիվ աշխատանքը խթանող ներառական և կայուն առևտրի ու ներդրումային շրջանակների, ինչպես նաև արժեքի և մատակարարման շղթաների կառուցմանը: Այնուամենայնիվ, այն առանձնահատուկ տեղ չի զբաղեցրել ԱՍԳ-ի մեծ մասում, չնայած որոշները սկսել են ՊԳՎ-ի հետ կապված նախաձեռնությունները համադրել կլիմայական նպատակներին:

Օրինակ՝ Հորդանան (2021)

«Ամրապնդել մասնավոր հատվածի դերը իրենց Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) միջոցների հատկացման գործում՝ էկոհամակարգերի և կենսաբազմազանության հարմարվողականության գործողությունների հետ կապված կանաչ ենթակառուցվածքների միջոցառումներին աջակցելու համար»:

Կայուն ձեռնարկությունների զարգացման և արդար անցման նպատակների ֆինանսավորման ինտեգրում ԱՍԳ-ում:

Արդար անցման հասնելու և մեղմման ու հարմարվողականության նպատակների իրականացման գործում դեռևս զգալի ֆինանսական բացեր կան: ԱՍԳ-ն, որը կարող է նաև ծառայել որպես ազգային ներդրումային ծրագիր, կարևոր քաղաքականության հարթակ է ապահովում կլիմայի և արդար անցման նպատակները, ներառյալ կայուն ձեռնարկությունների զարգացումը, ֆինանսավորման հոսքերի հետ համապատասխանեցնելու համար: Ձեռնարկությունների աջակցության միջոցառումների ներառումն ԱՍԳ-ում կարող է օգնել երկրներին ի ցույց դնել ներդրումային առաջնահերթությունները, բարձրացնել քաղաքականության թափանցիկությունն ինչպես ներքին, այնպես էլ միջազգային ներդրողների համար և ավելի լավ ուղղորդել հանրային բյուջեների և մասնավոր կապիտալի բաշխումը: Անհրաժեշտ ռեսուրսները արդյունավետորեն ներգրավելու համար ֆինանսավորման ռազմավարությունները կարող են հիմնվել պետական և մասնավոր, ներքին և միջազգային աղբյուրների համադրության վրա: Գործող դերակատարների լայն շրջանակներ՝ ինչպիսիք են զարգացման բանկերը, առևտրային բանկերը, ներդրողները և ապահովագրական հատվածը, կարող են օգտագործելով իրենց փոխլրացնող լիազորություններն ու ուժեղ կողմերը՝ նպաստել ձեռնարկությունների, այդ թվում՝ ՄՓՄՁ-ի և կոոպերատիվների ու ՍՀՏ միավորների, կապիտալի հասանելիության դյուրացմանը: Ֆինանսական հաստատությունները կարող են նաև աջակցել ոչ ֆորմալ տնտեսության միավորների ֆորմալացմանը: Բացի այդ, երբ ներդրումներն առաջնորդվում են ուժեղ համապարփակ գնահատման գործընթացներով և աջակցություն ստանում նորարարական ֆինանսական գործիքների կողմից, դրանք կարող են խթանել ձեռնարկությունների այնպիսի գործունեություն, որը նպաստում է ինչպես բնապահպանական, այնպես էլ սոցիալական նպատակներին:

Օրինակ՝ Օման (2023)

«Կենտրոնացումն ուղղված կլինի կապիտալի շուկայի ֆինանսական խորության ուժեղացմանը և կայուն ֆինանսավորման ապահովմանը՝ նորարարական մոդելների միջոցով արտադրողական ձեռնարկությունների, մասնավորապես՝ փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) մեկնարկի համար: Օմանի ռազմավարական բարենպաստ աշխարհագրական դիրքը հիանալի հնարավորություն է ընձեռում նպաստելու Օմանի մասնավոր ձեռնարկությունների և միջազգային բիզնես համայնքի միջև ներդրումային համագործակցությանը՝ ներգրավելով բարձրորակ արտաքին ուղիղ ներդրումներ կանաչ տեխնոլոգիաների ոլորտում և օգնել Օմանին դառնալ զուտ զրոյական մակարդակով (net zero) երկիր մինչև 2050 թվականը: Այս գլոբալ գործընկերությունները կընդլայնեն տնտեսական դիվերսիֆիկացումը և կխթանեն Օմանի ՀՆԱ-ի աճն՝ արտահանման ներդրումների մեծացման միջոցով»:

Օրինակ՝ Բրազիլիա (2024)

Էկոլոգիական փոխակերպման ծրագրի շրջանակներում ԱՍԳ-ն սահմանում է հանրային և մասնավոր ֆինանսավորման վերաբերյալ մի շարք գործիքներ, որոնք ներառում են՝

- Կայուն պետական պարտատոմսեր
- Կլիմայի հիմնադրամ՝ ստեղծված թիվ 12. 114/2009 օրենքով
- Բրազիլիայի՝ Արտասահմանյան մասնավոր կապիտալի մոբիլիզացման և արժութային հեջավորման ծրագիր (Eco Invest Brasil Ծրագիր)
- Բրազիլիայի կայունության դասակարգիչ
- Հարկային բարեփոխում (սկսվել է 2023 թվականին)
- Բրազիլիայի կլիմայական ներդրումների և էկոլոգիական փոխակերպման հարթակ (BIP)
- Բրազիլիայի արտանետումների առևտրային համակարգ (SBCE)

Օրինակ

Ածխածնի շուկաների օգտագործում կայուն ձեռնարկությունների և արժանապատիվ աշխատանքի համար

Քանի որ ածխածնի շուկաները շատ երկրների կողմից ավելի ու ավելի են դիտարկվում որպես արտանետումները կրճատելու կամ փոխհատուցելու միջոց, մասնավորապես՝ բարձր արտանետումներ ունեցող ոլորտներում, և եկամուտներ ստեղծելու կառավարությունների ու մասնակից կառույցների համար, կենսականորեն կարևոր է, որ դրանք նաև խթանեն արդար անցումը բոլորի համար: Մի կողմից, փոքր ձեռնարկությունները, նույնիսկ եթե ուղղակիորեն ներգրավված չեն ածխածնի շուկաներում, կարող են բախվել անուղղակի ազդեցությունների, ինչպիսիք են՝ խոշոր ընկերությունների կողմից փոխանցվող բարձրացված ծախսերը, հումքի և էներգիայի գների աճը և համապատասխանության գործընթացի լրացուցիչ ճնշումները: Մյուս կողմից, մասնակցությունը ածխածնի շուկաներին կարող է հնարավորություններ ստեղծել ձեռնարկությունների, այդ թվում՝ ՄՓՄՁ-ի, կոոպերատիվների և այլ ՍԶՏ միավորների համար՝ ստեղծելու նոր եկամտի հոսքեր և աջակցելու արժանապատիվ աշխատանքի ստեղծմանն: ԱՍԳ-ն կարող է ներառել պարտավորություններ՝ տարբեր տեսակի ձեռնարկությունների մասնակցությունն ածխածնի շուկաներին խթանելու վերաբերյալ՝ շրջակա միջավայրի բարելավման հետ զուգընթաց սոցիալական նպատակներին հասնելու համար:

Օրինակ՝ Վիետնամ (2022)

«Հզորացնել ձեռնարկությունների կարողությունները՝ վարկավորման ծրագրերին, նախագծերին մուտք գործելու և մասնակցելու ու ածխածնի շուկայի զարգացման գործընթացին ներգրավվելու նպատակով»:

Օրինակ՝ Բրազիլիա (2024)

«Բրազիլիայի արտանետումների առևտրի համակարգ (SBCE). ածխածնի շուկայի կարգավորումը նպատակ ունի կրճատել ջերմոցային գազերի արտանետումները և խթանել ցածր ածխածնային տեխնոլոգիական նորարարություններ՝ նոր բիզնես հնարավորություններ ստեղծելու և Կլիմայի փոփոխության վերաբերյալ ազգային քաղաքականության և Բրազիլիայի կողմից ստորագրված միջազգային համաձայնագրերի իրականացմանը աջակցելու համար»:

Օրինակ

Բովանդակությունից իրականացում

Արդար անցման ինտեգրումը, մասնավորապես՝ կայուն ձեռնարկությունների զարգացման վրա կենտրոնանալով, կարևորագույն նշանակություն ունի ցանկացած ԱՍԳ-ի համար: Այնուամենայնիվ, ԱՍԳ-ի արդյունավետ իրականացումը կպահանջի բազմաթիվ նախարարությունների, այդ թվում՝ աշխատանքի նախարարության, և ՄՓՄՁ-ի համար պատասխանատու կառույցների, ինչպես նաև բիզնեսի զարգացման ծառայություններ մատուցող կամ կոոպերատիվներին խթանող պետական գործակալությունների ակտիվ ներգրավվածությունն: Աշխատողների և գործատուների կազմակերպությունների իրական ներգրավվածությունը կլինի հիմնարար: Այս առումով, ԱՍԳ-ն, նույնիսկ ձևակերպման փուլում, պետք է ընդգծի ամբողջական կառավարություն և ամբողջական հասարակություն մոտեցման կարևորությունը՝ միաժամանակ հստակ ճանաչելով աշխատողների և գործատուների կազմակերպությունների կենսական դերն իբրև իրական տնտեսության դերակատարներ: Բացի այդ, ԱՍԳ-ի ներդրումային պլանավորումը արդար անցումային միջոցառումների և կայուն ձեռնարկությունների խթանման հետ կապն ապահովում է, որ ռազմավարություններն ունենան անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներ՝ իրականացումը հնարավոր դարձնելու համար: Սա պահանջում է կապիտալ մատակարարների հետ վաղ և կայուն ներգրավվածություն՝ ֆինանսավորման հոսքերը իրական տնտեսության անցումային կարիքներին համապատասխանեցնելու համար:

Հիմնական ռեսուրսներ /անգլերեն/՝

- ԱՄԿ-ի առաջարկ՝ արդար անցման և արժանապատիվ աշխատանքի համար ԱՍԳ-ն ամրապնդելու վերաբերյալ
- ԲԱԶ Հռչակագիր և էկոլոգիապես կայուն տնտեսությունների և հասարակությունների արդար անցում
- ՓՄՁ-ի համար շրջակա միջավայրի կայունությանն ուղղված արդար անցումն իրականություն դարձնելը
- Արդար անցման ֆինանսներ. ուղիներ բանկային և ապահովագրական ոլորտների համար
- Բանկային և ներդրումային գործունեության համար արդար անցման ֆինանսային գործիք
- Սոցիալական և համերաշխության տնտեսություն. շրջակա միջավայրի կայունություն
- ԱՄԿ օգնության ծառայություն. Բիզնես և արդար անցում
- Կրկնակի անցում. ֆորմալացում և անցում դեպի շրջակա միջավայրի կայունություն՝ արժանապատիվ աշխատանքի հետ մեկտեղ
- Կանաչ դարձնելով ձեռնարկությունները. գործընթացների և աշխատավայրերի փոխակերպում
- Ածխածնի շուկաները և դրանց հետևանքները բոլորի արդար անցման համար
- ԱՄԿ-ի՝ բազմազգ ձեռնարկություններին և սոցիալական քաղաքականությանն առնչվող սկզբունքների եռակողմ հռչակագիր (ԲԱԶ Հռչակագիր)
- Մարդու իրավունքների վրա բիզնեսի ազդեցության մասին ՄԱԿ-ի առաջնորդող սկզբունքներ
- ՏՀՀԿ Պատասխանատու բիզնես վարքագծի վերաբերյալ բազմազգ ձեռնարկությունների համար ուղեցույցը

Սոցիալական արդարության ապահովում, արժանապատիվ աշխատանքի խթանում

Աշխատանքի միջազգային կազմակերպությունը Միավորված ազգերի կազմակերպության մասնագիտացված հիմնարկ է, որն զբաղվում է աշխատանքի ոլորտի հարցերով: Մենք միավորում ենք կառավարություններին, գործատուներին և աշխատողներին՝ նպաստելու մարդակենտրոն մոտեցման խթանմանը աշխատանքի ապագայի համար՝ սոցիալական պաշտպանության և սոցիալական երկխոսության միջոցով աշխատատեղերի ստեղծման, աշխատանքի ոլորտում իրավունքների պաշտպանության:

ilo.org

Աշխատանքի միջազգային կազմակերպություն
Route des Morillons 4
1211 Geneva 22
Switzerland

Կայուն ձեռնարկությունների, արտադրողականության և արդար անցման վարչություն (ENTERPRISES)
ENTERPRISES@ilo.org

Այս աշխատանքի պատրաստման ընթացքում դիզայներն օգտագործել է Adobe Firefly՝ վերացական պատկերներ և նկարազարդումներ ստեղծելու համար: Դիզայները մանրակրկիտ ստուգել է բովանդակությունը և անհրաժեշտության դեպքում լիովին պատասխանատվություն է կրում դրա համար:

Այս աշխատանքը հասանելի է CC BY 4.0 արտոնագրով, որը թույլ է տալիս բովանդակության վերարտադրություն, տարածում և տեղայնացում (ներառյալ թարգմանությունը) ցանկացած նպատակով: Անհրաժեշտ է նշել Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ԱՄԿ) որպես սկզբնական աղբյուր: